«ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՇՈՒՌՆՈՒԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԲԱՐՁՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՈՐՈՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

«23» սեպտեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 14 անդամները

1 Հայրապետյան Ալեքսանդր (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի մանկավարժ, նախագահ)
2 Հովհաննիսյան Մանե (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ծնող, քարտուղար)
3 Գրիգորյան Մարինե (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի մանկավարժ)
4 Ալխասյան Նարինե (Քարահունջի միջնակարգ դպրոցի մանկավարժ)
5 Մովսիսյան Վարդիշաղ (Շուռնուխի միջնակարգ դպրոցի մանկավարժ, մասնակցել է հեռավար)
6 Թոխունց Արման (Բարձրավանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)
7 Աբգարյան Մարիաննա (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի ծնող)
8 Ալեքսանյան Շուշանիկ (Քարահունջի միջնակարգ դպրոցի ծնող)
9 Ավանեսյան Սյուզաննա (Շուռնուխի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
10 Հովհաննիսյան Արփինե (Բարձրավանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
11 Մկրտչյան Սվետա (Որոտանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
12 Աբգարյան Մարինե (Մարզպետի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
13 Հովակիմյան Արմինե (Համայնքի ղեկավարի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
14 Շեգունց Արմինե (ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)

Նիստին ներկա չէր կառավարման խորհրդի 1 անդամ

1. Հայրապետյան Դավիթ (Որոտանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)

Նիստին մասնակցում էին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Օլյա Ալեքսանյանը, Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրենի Ժ/Պ Անահիտ Աթանեսյանը

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1 Օրակարգի հաստատում։
(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)
2 Նախագահի ընտրություն։
(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)
3 Քարտուղարի ընտրություն։
(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)
4 Դպրոցների կառավարման խորհրդի նիստերի հրավիրման ժամանակացույցը և աշխատակարգը։
(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)
5 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկում։
(զեկուցողներ՝ դպրոցների մանկավարժներ, տնօրեններ)
6 Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ներքին կարգապահական կանոններում կատարվող փոփոխություններ։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
7 Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում պակաս խտությամբ չորս դասարան ունենալու մասին հարցը։
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)
8 Աշխատանքային ռեժիմի քննարկում։
(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)
9 Դպրոցների ներքին գնահատման արդյունքների քննարկում։

(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)

10 Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգի հաստատում։

(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում։

(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)

Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը։

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը։

Լսեցին 2. Նախագահի ընտրության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)

Զեկուցողը նշեց, որ կարգի համաձայն պետք է խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, փակ քվեարկությամբ ընտրել խորհրդի նախագահ։

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Խորհրդի անդամները նշեցին, որ նպատակահարմար են համարում, որպեսզի կառավարման խորհրդի նախագահ և քարտուղար լինեն այն ներկայացուցիչները, որոնք կարող են իրականացնել միասնական խորհրդի կազմակերպչական աշխատանքները նույնպես։ Կառավարման խորհրդի անդամները որպես նախագահի թեկնածուներ առաջադրեցին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցիչ Ալեքսանդր Հայրապետյանի, Գորիսի համայնքապետարանի հանրային կապերի, կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ Արմինե Հովակիմյանի թեկնածությունները։ Նարինե Ալխասյանն առաջարկեց այնպես առաջնորդվել, որ և՛ նախագահը, և՛ քարտուղարը լինեն մեկ դպրոցի ներկայացուցիչ, որպեսզի աշխատանքները հնարավոր լինի պատշաճ կազմակերպել։ Կառավարման խորհրդի անդամներն առաջարկեցին նաև նախագահ ընդրել որևէ դպրոցի ներկայացուցչի, որի տեղեկացված կլինի կրթական համակարգից և կկարողանա ըստ անհրաժեշտության խորհրդատվություն և օգնություն տրամադրել անդամ դպրոցների ներկայացուցիչներին։

Որոշեցին՝ Փակ քվեարկությամբ, 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով կառավարման խորհրդի նախագահ ընտրվեց Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցիչ Ալեքսանդր Հայրապետյանը։

Լսեցին 3. Քարտուղարի ընտրության մասին հարցը։

(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)

Զեկուցողը նշեց, որ սահմանված կարգով պետք է ընտրել խորհրդի քարտուղար։ Հավելեց, որ բոլոր ցանկացողները կարող են առաջադրվել և իրականացնել խորհրդի քարտուղարի գործառույթները։

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Խորհրդի անդամները նշեցին, որ նպատակահարմար են համարում, որպեսզի կառավարման խորհրդի նախագահ և քարտուղար լինեն այն ներկայացուցիչները, որոնք կարող են իրականացնել միասնական խորհրդի կազմակերպչական աշխատանքները նույնպես։ Կառավարման խորհրդի անդամները որպես կառավարման խորհրդի քարտուղար առաջադրեցին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ծնող Մանե Հովհաննիսյանի թեկնածությունը։ Նարինե Ալխասյանը նշեց, որ թեկնածուի առաջադրումը ճիշտ է համարում, քանի որ նախագահ ընտրվել է նույն դպրոցի ներկայացուցիչը և նրանց միասնական աշխատանքը կօգնի որպեսզի աշխատանքները հնարավոր լինի պատշաճ կազմակերպել։

Որոշեցին՝ 14 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով կառավարման խորհրդի քարտուղար ընտրվեց Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ծնող

Մանե Հովհաննիսյան։

Լսեցին 4. Դպրոցների կառավարման խորհրդի նիստերի հրավիրման ժամանակացույցը և աշխատակարգը։

(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)

Զեկուցողը նշեց, որ արդյունավետ քննարկումներին և հարցերին ճիշտ լուծումներ տալու համար նիստերն անհրաժեշտ է կազմակերպել ըստ սահմանված կարգի՝ առնվազն երեք ամիսը մեկ։ Զեկուցողը ներկայացրեց նաև կառավարման խորհրդի աշխատակարգը, նշեց, որ այն համապատասխանում է դպրոցի օրինակելի կանոնադրության պահանջներին։

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները նշեցին, որ առնվազն երեք ամիսը մեկ նիստերի անցկացումն ամրագրված է դպրոցի օրինակելի կանոնադրության մեջ, ինչպես նաև շեշտեցին, որ աշխատակարգի հաստատումը նույնպես հաստատված է կանոնադրությամբ։

Որոշեցին՝ Հաստատել դպրոցների կառավարման խորհրդի նիստերի հրավիրման ժամանակացույցը և աշխատակարգը (կցվում է)։

Լսեցին 5. 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիայի քննարկման և հաստատման մասին հարցը։

(զեկուցողներ՝ դպրոցների մանկավարժներ, տնօրեններ)

Զեկուցողները ներկայացրին դպրոցի 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիան, նշեցին, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները։

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցների տարիֆիկացիան և այն համապատասխանում է բոլոր պահանջներին։

Որոշեցին՝ Հավանության արժանացնել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2025 ուսումնական տարվա առաջին կիսամյակի տարիֆիկացիան (կցվում է)։

Լսեցին 6. Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ներքին կարգապահական կանոններում կատարվող փոփոխությունների կատարման մասին հարցը։

(զեկուցող՝Ս. Ավանեսյան)

Զեկուցողն անդրադարձ կատարեց ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99, 106.1 հոդվածներին, ինչպես նաև ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N201-Ն որոշմանը, որոնցով սահմանվում են համատեղությամբ աշխատանքի, հեռավար աշխատանքի մասին դրույթները, ինչպես նաև ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները։

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողներն առաջարկեցին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ներքին կարգապահական կանոններում ավելացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99, 106.1 հոդվածներին, ինչպես նաև ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N201-Ն որոշմանը համապատասխան հոդվածները։

Որոշեցին՝ Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ներքին կարգապահական կանոններում ավելացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի

99, 106.1 հոդվածներին, ինչպես նաև ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի N201-Ն որոշմանը համապատասխան հոդվածները և հաստատել ներքին կարգապահական կանոնները՝ նոր խմբագրությամբ (կցվում է):

Լսեցին 7. Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում պակաս խտությամբ չորս դասարան ունենալու մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը բոլորի ուշադրությունը հրավիրեց նախորդ տարիների փորձի վրա, շեշտեց, որ 2020-2021 ուսումնական տարվանից սկսած Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցում գործում է պակաս խտությամբ դասարան: Շեշտեց, որ դպրոցը կարող է սահմանել պակաս խտությամբ դասարան՝ դպրոցի լրացուցիչ ֆինանսական միջոցների հաշվին, հավելելով, որ 2024-2025 ուսումնական տարում նախատեսում են ունենալ պակաս խտությամբ երկու դասարան՝ տարրական կրթական աստիճանում՝ առաջին դասարան, հիմնական կրթական աստիճանում՝ հինգերորդ դասարան: Սերգեյ Ավանեսյանը կառավարման խորհրդի անդամներին ներկայացրեց դպրոցի լրացուցիչ հնարավորությունները, խնայողությունները, ներկայացրեց դպրոցի ֆինանսական հնարավորությունները, իր և վարչատնտեսական մասի համակարգողի կողմից կատարված աշխատանքները, համագործակցությունները, որոնք միտված են լրացուցիչ միջոցների ձեռքբերմանն ու խնայողությունների ավելացմանը: Ավանեսյանը նաև նշեց, որ այդ հարցով դպրոցի տնօրինությանն են դիմել ծնողները, որոնք նշել են, որ նպատակահարմար են համարում շարունակել ուսուցման պրոցեսը դասարանների նախորդ տարիների խտությամբ ու առաջարկել, դասարանների քանակը թողնել անփոփոխ:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողներն առաջարկեցին հավանություն տալ հարցին:

Որոշեցին՝ Հաշվի առնելով Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանի հիմնավորումները, դպրոցի ֆինանսական հնարավորություններն ու ծնողների առաջարկը, ինչպես նաև այն հանգամանքը, որ դպրոցը նախորդ տարիների ընթացքում նույնպես ունեցել է պակաս խտությամբ դասարան և կարողացել է պատճաշ կերպով կառավարել ֆինանսական միջոցները, թույլ տալ 2024-2025 ուսումնական տարում նույնպես ունենալ պակաս խտությամբ երկու դասարան՝ տարրական կրթական աստիճանում՝ առաջին դասարան, հիմնական կրթական աստիճանում՝ հինգերորդ դասարան:

Լսեցին 8. Աշխատանքային ռեժիմի քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)

Զեկուցողը նշեց, որ թեկուզև դպրոցներն արդեն իսկ հաստատել և լիազոր մարմին են ուղարկել իրենց հաստատությունների աշխատանքային ռեժիմները, սակայն տնօրինություններն առաջարկում եմ այդ հարցը քննարկել նաև կառավարման խորհրդում:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները, նիստին ներկա տնօրենները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնական հաստատությունները սահմանված կարգով կազմել, քննարկել և հաստատել են դպրոցների աշխատանքային ռեժիմները: Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Օլյա Ալեքսանյանը, Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրենի Ժ/Պ Անահիտ Աթանեսյանը նշեցին, որ իրենց հաստատություններում սահմանված կարգով, իրավական ակտերի նորմերին համապատասխան մշակվել են աշխատանքային ռեժիմները և

դրանք ուղարկվել են լիազոր մարմին: Բարձրավանի, Շուռնուխի մանկավարժները նշեցին, որ իրենց հաստատություններում նույնպես աշխատանքային ռեժիմները կազմվել են սահմանված նորմերին համապատասխան:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատանքային ռեժիմները (կցվում է):

Լսեցին 9. Դպրոցների ներքին գնահատման արդյունքների քննարկման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)

Զեկուցողը նշեց, որ սահմանված կարգի համաձայն յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին պետք է քննարկվեն դպրոցի ներքին գնահատման արդյունքները, որը կարգավորվում է դպրոցների օրինակելի կանոնադրության 33-րդ կետի 5-րդ ենթակետով, որտեղ սահմանվում է, որ խորհուրդը քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները: Հավելեց, որ քանի որ այս տարի միասնական կառավարման խորհուրդն ուշ է ձևավորվել, ներքին գնահատման քննարկումը նույնպես ուշացել է: Զեկուցողն անդրադարձավ բոլոր դպրոցների ներքին գնահատման արդյունքներին, նշեց, որ հաստատության գործունեության ներքին գնահատման նպատակն է՝ բարելավել հաստատության կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակը և բարձրացնել արդյունավետությունը կամ, այլ կերպ ասած, նպաստել ուսումնական հաստատության գործունեության հետագա բարելավմանը՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի կազմակերպման, ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և սովորողների առաջընթացի ուսումնասիրման միջոցով:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները, նիստին ներկա տնօրենները

Արտահայտվողները նշեցին, որ մանրամասնորեն գրի են առնվել ու ներկայացվել դպրոցների ներքին գնահատումը, շեշտեցին, որ հանձնաժողովի կողմից կատարվել է ծավալուն աշխատանք:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2024 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվությունը (կցվում է):

Լսեցին 10. Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգի հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Հովակիմյան)

Զեկուցողը հղում կատարեց «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 48-րդ կետի 10-րդ ենթակետին, որտեղ սահմանվում է, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատած՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա մշակում և խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը: Զեկուցողը նշեց, որ բոլոր դպրոցներն առաջորդվում են Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգով:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները, նիստին ներկա տնօրենները

Արտահայտվողներն առաջարկեցին հաստատել դպրոցների Ուսուցչի

թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը։

Որոշեցին՝ Հաստատել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը (կցվում է)։

Խորհրդի նախագահ՝		Ալեքսանդր Հայրապետյան
Քարտուղար՝		Մանե Հովհաննիսյան
Անդամներ՝		Մարինե Գրիգորյան
		Նարինե Ալխասյան
		Վարդիշաղ Մովսիսյան
		Արման Թոխունց
		Մարիաննա Աբգարյան
		Շուշանիկ Ալեքսանյան
		Սյուզաննա Ավանեսյան
		Արփինե Հովհաննիսյան
		Սվետա Մկրտչյան
		Մարինե Աբգարյան
		Արմինե Հովակիմյան
		Արմինե Շեգունց

«ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՇՈՒՌՆՈՒԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԲԱՐՁՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՈՐՈՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

«30» դեկտեմբերի 2024թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 13 անդամները

1 Հայրապետյան Ալեքսանդր (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի մանկավարժ, նախագահ)
2 Հովհաննիսյան Մանե (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ծնող, քարտուղար)
3 Գրիգորյան Մարինե (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի մանկավարժ)
4 Մովսիսյան Վարդիշաղ (Շուռնուխի միջնակարգ դպրոցի մանկավարժ, մասնակցել է հեռավար)
5 Թոխունց Արման (Բարձրավանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)
6 Աբգարյան Մարիաննա (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի ծնող)
7 Ալեքսանյան Շուշանիկ (Քարահունջի միջնակարգ դպրոցի ծնող)
8 Ավանեսյան Սյուզաննա (Շուռնուխի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
9 Հովհաննիսյան Արփինե (Բարձրավանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
10 Մկրտչյան Սվետա (Որոտանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
11 Աբգարյան Մարինե (Մարզպետի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
12 Հովակիմյան Արմինե (Համայնքի ղեկավարի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
13 Շեգունց Արմինե (ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
14 Ալխասյան Նարինե (Քարահունջի միջնակարգ դպրոցի մանկավարժ)

Նիստին ներկա չէր կառավարման խորհրդի 1 անդամ

1. Հայրապետյան Դավիթ (Որոտանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)

Նիստին մասնակցում էին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, վարչատնտեսական մասի համակարգող Դավիթ Կոստանդյանը, Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Օլյա Ալեքսանյանը, վարչատնտեսական մասի համակարգող Գուրգեն Մկրտչյանը, Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրենի Ժ/Պ Անահիտ Աթանեսյանը, վարչատնտեսական մասի համակարգող Գագիկ Հովսեփյանը, Բարձրավանի միջնակարգ դպրոցի տնօրեն Լիլյա Ալումյանը (մասնակցել է հեռավար), Որոտանի միջնակարգ դպրոցի տնօրեն Արա Գրիգորյանը (մասնակցել է հեռավար):

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1 Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
2 2024 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տրամադրելու մասին:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
3 Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի Ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգի, Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ աշակերտների հարցման կանոնակարգի, Ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգի քննարկում և հաստատում:
(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2024 թվականի ֆինանսական մնացորդային գումարից աշխատողներին հավելավճար տրամադրելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)

Զեկուցողը նշեց, որ 2024 թվականի համար դպրոցները կարող են աշխատողներին հավելավճարներ տրամադրել ֆինանսական միջոցների թույլատրելի սահմաններում: Առաջարկեց հաշվի առնելով աշխատողների համագործակցված արդյունավետ աշխատանքը, ուսուցիչների պատրաստակամությունը՝ ուղղված դպրոցում կրթության որակի բարձրացմանը, աշխատողների հետևողական և սրտացավ վերաբերմունքը շենքային պայմանների բարելավմանը՝ հավելավճար տրամադրել աշխատողներին:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները, տնօրենները, վարչատնտեսական մասի համակարգողները

Արտահայտվողներից յուրաքանչյուրը ներկայացրեց իր դպրոցի աշխատողների կողմից կատարված աշխատանքները, արձանագրեց հաջողություններն ու ձեռքբերումները:

Արտահայտվողները ողջունեցին հավելավճար տրամադրելու առաջարկը, նշեցին, որ դպրոցները կարող են հավելավճարներ տրամադրել ֆինանսական միջոցների հնարավորությունների սահմաններում:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխատողներին 2024 թվականի ֆինանսական մնացորդային գումարից ֆինանսական միջոցների հնարավորությունների սահմաններում հավելավճար տրամադրելու մասին հարցը:

Լսեցին 3. Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի Ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգի, Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ աշակերտների հարցման կանոնակարգի, Ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգի քննարկման և հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Ս. Ավանեսյան)

Զեկուցողը նշեց, որ դպրոցի Ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգը, Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ աշակերտների հարցման կանոնակարգը, Ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը քննարկվել են դպրոցի մանկավարժական խորհրդի նիստում: Զեկուցողը ներկայացրեց բոլոր կանոնակարգերը, նշեց, որ Ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգի նպատակն է բարելավել ուսումնական և աշխատանքային միջավայրը՝ աշակերտների և աշխատակիցների արդյունավետ գործության համար: Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ աշակերտների հարցման կանոնակարգի նպատակն է սահմանել դպրոցի աշակերտների ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և ուսուցչական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորումը: Ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգ նպատակն է պարզել շրջանավարտների կողմից դպրոցում ստացած կրթության արդյունավետության և կրթական ծառայությունների որակը: Զեկուցողը նշեց նաև, որ առաջարկվող կանոնակարգերով իրականացված հարցումները

կարող են հիմք հանդիսանալ նաև դպրոցի ներքին գնահատման համար և ստացված տվյալներն ընդհանրական կերպով կարող են կիրառվել ուսուցման որակը բարելավելու նպատակով: Զեկուցողն առաջարկեց կանոնակարգերը հաստատել, սակայն դրանց կիրառկումն իրականացնել փուլային եղանակով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք դպրոցում նոր են դրվում շրջանառության մեջ և նախատեսում են լրացուցիչ աշխատանքներ:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Կառավարման խորհրդի անդամները նշեցին, որ առաջարկված երեք կանոնակարգներն էլ խիստ արդիական են և դրանց կիրառումը կունենա իր արդյունքը:

Որոշեցին՝ 1. Հաստատել Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի Ներքին շահակիցների բավարարվածության հարցման կանոնակարգը, Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ աշակերտների հարցման կանոնակարգը, Ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

2. Դրանց կիրառկումն իրականացնել փուլային եղանակով:

Խորհրդի նախագահ՝	_____	Ալեքսանդր Հայրապետյան
Քարտուղար՝	_____	Մանե Հովհաննիսյան
Անդամներ՝	_____	Մարինե Գրիգորյան
	_____	Վարդիշաղ Մովսիսյան
	_____	Արման Թոխունց
	_____	Մարիաննա Աբգարյան
	_____	Շուշանիկ Ալեքսանյան
	_____	Սյուզաննա Ավանեսյան
	_____	Արփինե Հովհաննիսյան
	_____	Սվետա Մկրտչյան
	_____	Մարինե Աբգարյան
	_____	Արմինե Հովակիմյան
	_____	Արմինե Շեգունց
	_____	Ալխասյան Նարինե

«ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՇՈՒՌՆՈՒԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԲԱՐԶՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՈՐՈՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

«07» հունվարի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 13 անդամները

1 Հայրապետյան Ալեքսանդր (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի մանկավարժ, նախագահ)
2 Հովհաննիսյան Մանե (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ծնող, քարտուղար)
3 Գրիգորյան Մարինե (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի մանկավարժ)
4 Մովսիսյան Վարդիշաղ (Շուռնուխի միջնակարգ դպրոցի մանկավարժ, մասնակցել է հեռավար)
5 Թոխունց Արման (Բարձրավանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)
6 Աբգարյան Մարիաննա (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի ծնող)
7 Ալեքսանյան Շուշանիկ (Քարահունջի միջնակարգ դպրոցի ծնող)
8 Ավանեսյան Սյուզաննա (Շուռնուխի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
9 Հովհաննիսյան Արփինե (Բարձրավանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
10 Մկրտչյան Սվետա (Որոտանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
11 Աբգարյան Մարինե (Մարզպետի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
12 Հովակիմյան Արմինե (Համայնքի ղեկավարի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
13 Շեգունց Արմինե (ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)

Նիստին ներկա չէր կառավարման խորհրդի 2 անդամ

1. Հայրապետյան Դավիթ (Որոտանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)
2. Ալխասյան Նարինե (Քարահունջի միջնակարգ դպրոցի մանկավարժ)

Նիստին մասնակցում էին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Մերգեյ Ավանեսյանը, վարչատնտեսական մասի համակարգող Դավիթ Կոստանդյանը, Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Օլյա Ալեքսանյանը, վարչատնտեսական մասի համակարգող Գուրգեն Մկրտչյանը, Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրենի Ժ/Պ Անահիտ Աթանեսյանը, վարչատնտեսական մասի համակարգող Գագիկ Հովսեփյանը, Բարձրավանի միջնակարգ դպրոցի տնօրեն Լիլյա Ալումյանը (մասնակցել է հեռավար), Որոտանի միջնակարգ դպրոցի տնօրեն Արա Գրիգորյանը (մասնակցել է հեռավար):

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1 Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
2 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկում:
(զեկուցողներ՝ դպրոցների մանկավարժներ, տնօրեններ, վարչատնտեսական մասի համակարգողներ)
3 2025 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին:
(զեկուցողներ՝ տնօրեններ, վարչատնտեսական մասի համակարգողներ)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիայի քննարկում:

(զեկուցողներ՝ դպրոցների մանկավարժներ, տնօրեններ, վարչատնտեսական մասի համակարգողներ)

Զեկուցողները ներկայացրին դպրոցների 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան, ուսումնական պլանները, նշեցին, որ այն կազմվելու համար հիմք են հանդիսացել նախնական և հիմնական դասաբաշխումները, ինչպես նաև սահմանված ձևանմուշին համապատասխան մյուս պահանջները:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները նշեցին, որ ուսումնասիրել են դպրոցների տարիֆիկացիաները, ուսումնական պլանները և դրանք համապատասխանում են սահմանված կարգին ու պահանջներին:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2025 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի տարիֆիկացիան (կցվում է):

Լսեցին 3. 2025 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակի քննարկման մասին հարցը:

(զեկուցողներ՝տնօրեններ, վարչատնտեսական մասի համակարգողներ)

Զեկուցողներից յուրաքանչյուրը ներկայացրեց իրենց դպրոցի տվյալները:

«Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի բյուջեի նախագծի նախնական տարբերակով նախատեսված է դպրոցին հատկացնել.

- աշխատավարձ-40000,0 (քառասուն միլիոն) դրամ
- ծառայությունների ձեռքբերում- 3200,0 (երեք միլիոն երկու հարյուր հազար) դրամ
- շենք. կապ. վերանորոգում-1000,0 (մեկ միլիոն) դրամ
- հիմնական միջոցների ձեռքբերում.- 500,0 (հինգ հարյուր հազար) դրամ
- նախագծահետ. ծախս- 30,0 (հարյուր հիսուն հազար) դրամ:

«Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի բյուջեի նախագծի նախնական տարբերակով նախատեսված է դպրոցին հատկացնել.

- աշխատավարձ-156000,0 (մեկ հարյուր հիսունվեց միլիոն) դրամ
- շարունակական ծախսեր- 25000,0 (քսանհինգ միլիոն) դրամ
- շենք. կապ. վերանորոգում-5000,0 (հինգ միլիոն) դրամ
- հիմնական միջոցների ձեռքբերում.- 990,0 (ինը հարյուր իննսուն հազար) դրամ

Ընդամենը՝ 186990,0 (մեկ հարյուր ութսունվեց միլիոն ինը հարյուր իննսուն հազար) դրամ:

«Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի բյուջեի նախագծի նախնական տարբերակով նախատեսված է դպրոցին հատկացնել.

- աշխատավարձ-59000,0 դրամ
- ծառայություններ և ապր. Ձեռքբերումներ-4970,6 դրամ
- այլ ծախսեր-30,0 դրամ

Ընդամենը՝ 6400,0 դրամ:

Բյուջեի նախագծի նախնական տարբերակով նախատեսված է «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ին հատկացնել.

- աշխատավարձ-103000000 (մեկ հարյուրերեք միլիոն) ՀՀ դրամ
- ծառայությունների ձեռքբերում- 8500000 (ութ միլիոն հինգ հարյուր) ՀՀ

դրամ

- շենքի պահպանման և վերանորոգման ծախսեր- 3500000 (երեք միլիոն հինգ հարյուր) ՀՀ դրամ
- Այլ ծախսեր 1300000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 116300000 (հարյուրտասնվեց միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

Բյուջեի նախագծի նախնական տարբերակով նախատեսված է «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին հատկացնել.

- աշխատավարձ 35 245 000 (երեսունհինգ միլիոն երկու հարյուր քաեասունհինգ հազար) դրամ
- ծառայությունների ձեռք բերում 825000 (ութ հարյուր քսանհինգ հազար) դրամ
- պահպանման ծախսեր 140000 (մեկ հարյուր քաեասուն հազար) դրամ
- երթևեկության ծախս 600 000 (վեց հարյուր հազար) դրամ:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամներ

Կառավարման խորհրդի անդամները հավանություն տվեցին դպրոցների կողմից ներկայացված բյուջեի նախագծի նախնական տարբերակին:

Որոշեցին՝ Հավանության արժանացնել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2025 թվականի բյուջեի նախագծի նախնական տարբերակները:

Խորհրդի նախագահ՝		Ալեքսանդր Հայրապետյան
Քարտուղար՝		Մանե Հովհաննիսյան
Անդամներ՝		Մարինե Գրիգորյան
		Վարդիշաղ Մովսիսյան
		Արման Թոխունց
		Մարիաննա Աբգարյան
		Շուշանիկ Ալեքսանյան
		Սյուզաննա Ավանեսյան
		Արփինե Հովհաննիսյան
		Սվետա Մկրտչյան
		Մարինե Աբգարյան
		Արմինե Հովակիմյան
		Արմինե Շեգունց

«ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՇՈՒՌՆՈՒԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԲԱՐԶՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՈՐՈՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի
ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4

«07» ապրիլի 2025թ. ք. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 15 անդամները

1 Հայրապետյան Ալեքսանդր (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի մանկավարժ, նախագահ)
2 Հովհաննիսյան Մանե (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ծնող, քարտուղար)
3 Գրիգորյան Մարինե (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի մանկավարժ)
4 Մովսիսյան Վարդիշաղ (Շուռնուխի միջնակարգ դպրոցի մանկավարժ, մասնակցել է հեռավար)
5 Թոխունց Արման (Բարձրավանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)
6 Աբգարյան Մարիաննա (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի ծնող)
7 Ալեքսանյան Շուշանիկ (Քարահունջի միջնակարգ դպրոցի ծնող)
8 Ավանեսյան Սյուզաննա (Շուռնուխի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
9 Հովհաննիսյան Արփինե (Բարձրավանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
10 Մկրտչյան Սվետա (Որոտանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
11 Աբգարյան Մարինե (Մարզպետի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
12 Հովակիմյան Արմինե (Համայնքի ղեկավարի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
13 Շեգունց Արմինե (ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
14 Հայրապետյան Դավիթ (Որոտանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)
15 Խուրշուդյան Արևիկ (Քարահունջի միջնակարգ դպրոցի մանկավարժ)

Նիստին մասնակցում էին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, վարչատնտեսական մասի համակարգող Դավիթ Կոստանդյանը, Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Օլյա Ալեքսանյանը, վարչատնտեսական մասի համակարգող Գուրգեն Մկրտչյանը, Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրենի Ժ/Պ Անահիտ Աթանեսյանը, վարչատնտեսական մասի համակարգող Գագիկ Հովսեփյանը, Բարձրավանի միջնակարգ դպրոցի տնօրեն Լիլյա Ալումյանը (մասնակցել է հեռավար), Որոտանի միջնակարգ դպրոցի տնօրեն Արա Գրիգորյանը (մասնակցել է հեռավար):

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1 Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
2 2025թ. առաջին եռամսյակային հաշվետվության մասին հարցը:
(զեկուցողներ՝ տնօրեններ, վարչատնտեսական մասի համակարգողներ)
3 «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության հաստատում:
(զեկուցող՝ Դավիթ Կոստանդյան)
4 «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Նարինե Ալխասյանի փոփոխության և կառավարման խորհրդի կազմում Արևիկ Խուրշուդյանին ընդգրկելու մասին:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2025թ. առաջին եռամսյակային հաշվետվության մասին հարցը:

(զեկուցողներ՝ տնօրեններ, վարչատնտեսական մասի համակարգողներ)

Զեկուցողները ներկայացրին դպրոցների 2025 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվությունները՝ անդրադառնալով բյուջեի հատկացումների արդյունավետությանը, կատարված ծախսերին և ֆինանսական հոսքերի կառավարման գործընթացին: Նրանք ներկայացրին նաև իրականացված աշխատանքների շրջանակը, ընդգծեցին ձեռքբերումները և մատնանշեցին առկա խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր ուղիները:

Զեկուցողները հանդես եկան մանրամասն վերլուծությամբ՝ առանձին անդրադառնալով 2025 թվականի հունվարի 1-ի դրությամբ գոյություն ունեցող բյուջեի մնացորդին, առաջին եռամսյակի ընթացքում իրականացված ծախսերին, ինչպես նաև ապրիլ ամսվա դրությամբ՝ եռամսյակի ավարտին, արձանագրված ֆինանսական մնացորդին: Նշվեցին ծախսերի կառուցվածքը, օգտագործված և չօգտագործված միջոցների չափերը, ինչպես նաև ներկայացվեցին առաջարկություններ ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ տնօրինման համար:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները շնորհակալություն հայտնեցին զեկուցողներին ներկայացված մանրամասն և ամբողջական վերլուծության համար: Նրանք ընդգծեցին, որ նման հաշվետվությունները նպաստում են բյուջետային գործընթացների թափանցիկությանն ու վերահսկելիությանը: Միևնույն ժամանակ, կարծիք հնչեց, որ անհրաժեշտ է շարունակաբար կատարել խորքային վերլուծություն ծախսերի արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև խթանել մնացորդային միջոցների նպատակային և ժամանակին օգտագործումը՝ հիմնվելով դպրոցների կոնկրետ կարիքների վրա: Արտահայտվեցին նաև առաջարկություններ՝ ֆինանսական պլանավորման մեխանիզմներն առավել արդյունավետ կազմակերպելու և հնարավոր ռիսկերը նվազեցնելու ուղղությամբ:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2025թ. առաջին եռամսյակային հաշվետվությունները:

Լսեցին 3. «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականության հաստատման մասին հարցը:

(զեկուցող՝ Դավիթ Կոստանդյան)

2025 թվականին «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը վերանայվել է և անհրաժեշտություն կա նոր խմբագրությամբ հաստատվելու՝ լիովին համապատասխանեցված ՀՀ ֆինանսների նախարարության սահմանած չափանիշներին և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտներին:

Քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել մեր կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության թափանցիկությունը, հաշվետվողականությունը և արդյունավետ վերահսկումը:

Մասնավորապես, նոր խմբագրությամբ հստակեցվել են.

- Ֆինանսական հաշվետվությունների կազմման և ներկայացման մեխանիզմները,
- Հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների և պաշարների հաշվառման և գնահատման կարգը,

- Դրամական միջոցների հոսքերի, զուտ ակտիվների փոփոխությունների և ֆինանսական արդյունքների հաշվետվությունների կառուցվածքը,
- Պահուստների, պայմանական պարտավորությունների և ակտիվների ճանաչման և հաշվառման սկզբունքները:

Այս նորացված քաղաքականությունը միտված է ոչ միայն օրենսդրական պահանջների պահպանմանը, այլ նաև դպրոցի ներքին ֆինանսական կառավարման գործընթացների առավել համակարգված և վերահսկելի դարձնելուն: Հարկ եմ համարում ընդգծել, որ մեր կողմից կիրառվող քաղաքականության բոլոր բաղադրիչները կոչված են նպաստելու ֆինանսական ռիսկերի նվազեցմանը և ֆինանսական միջոցների առավել արդյունավետ օգտագործմանը:

Առաջարկում եմ, որ շարունակենք հետևողականորեն գործադրել այս քաղաքականության դրույթները և պարբերաբար վերանայենք դրանք՝ անհրաժեշտության դեպքում կատարելով ճշգրտումներ՝ ժամանակակից պահանջներին համապատասխան:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Կարծիք արտահայտվողները շնորհակալություն հայտնեցին ներկայացված ընդգրկուն և մասնագիտական մակարդակով կազմված զեկուցման համար: Ընդգծվեց, որ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերանայումը և նոր խմբագրությամբ հաստատումը ժամանակին և անհրաժեշտ քայլ է, որը համապատասխանում է թե՛ օրենսդրական պահանջներին, թե՛ կազմակերպության արդյունավետ կառավարման շահերին:

Նշվեց, որ նորացված քաղաքականությունը թույլ կտա ապահովել ֆինանսատնտեսական գործընթացների առավել հստակ, թափանցիկ և համակարգված իրականացում, ինչպես նաև կնվազեցնի ֆինանսական ռիսկերը: Բացի այդ, կարևորվեց, որ նման մոտեցումը խթանում է ոչ միայն հաշվետվողականության մակարդակի բարձրացումը, այլև ուսումնական հաստատության ընդհանուր վստահելիության և ֆինանսական կայունության ամրապնդումը:

Կարծիք արտահայտողները կարևորեցին նաև, որ քաղաքականության կիրառման գործընթացը լինի հետևողական և վերահսկելի, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պարբերաբար կատարվեն ճշգրտումներ՝ հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունները և գործնական անհրաժեշտությունը:

Որոշեցին՝ Հաստատել «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը (կցվում է էլեկտրոնային տարբերակով):

Լսեցին 4. «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Նարինե Ալխասյանի փոփոխության և կառավարման խորհրդի կազմում Արևիկ Խուրշուդյանին ընդգրկելու մասին հարցը:

(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի նախկին ներկայացուցիչ Նարինե Ալխասյանը այլևս չի աշխատում տվյալ դպրոցում, ինչի հետևանքով՝ ըստ սահմանված կարգի, նա իրավասու չէ ներկայացնելու դպրոցի մանկավարժական անձնակազմի շահերը կառավարման խորհրդում: Սույն փոփոխության արդյունքում՝ Սյունիքի մարզպետի 2025 թվականի հունվարի 22-ի որոշմամբ, Նարինե Ալխասյանին կառավարման խորհրդում փոխարինում է «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Արևիկ Խուրշուդյանը:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները ողջունեցին կատարած փոփոխությունը՝ կարևորելով, որ կառավարման խորհրդում պետք է ընդգրկված լինեն գործող մանկավարժներ, որոնք անմիջականորեն մասնակցում են դպրոցի կրթական գործընթացին և լավատեղյակ են առօրյա խնդիրներին: Նրանք վստահություն հայտնեցին, որ Արևիկ Խուրշուդյանը, լինելով դպրոցի ակտիվ ուսուցչուհի, կառավարման խորհրդում կներկայացնի մանկավարժական անձնակազմի կարծիքն ու շահերը՝ նպաստելով համատեղ, արդյունավետ և պատասխանատու որոշումների կայացմանը:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Նարինե Ալխասյանի փոփոխության և կառավարման խորհրդի կազմում Արևիկ Խուրշուդյանին ընդգրկելու մասին զեկուցումը:

Խորհրդի նախագահ՝	_____	Ալեքսանդր Հայրապետյան
Քարտուղար՝	_____	Մանե Հովհաննիսյան
Անդամներ՝	_____	Մարինե Գրիգորյան
	_____	Վարդիշաղ Մովսիսյան
	_____	Արման Թոխունց
	_____	Մարիաննա Աբգարյան
	_____	Շուշանիկ Ալեքսանյան
	_____	Սյուզաննա Ավանեսյան
	_____	Արփինե Հովհաննիսյան
	_____	Սվետա Մկրտչյան
	_____	Մարինե Աբգարյան
	_____	Արմինե Հովակիմյան
	_____	Արմինե Շեգունց
	_____	Դավիթ Հայրապետյան
	_____	Արևիկ Խուրշուդյան

«ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՔԱՐԱՀՈՒՆՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՇՈՒՌՆՈՒԽԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ԲԱՐՁՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի, «ՈՐՈՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5

«30» հունիսի 2025թ. գ. Գորիս

Նիստին ներկա էին կառավարման խորհրդի 15 անդամները

1 Հայրապետյան Ալեքսանդր (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի մանկավարժ, նախագահ)
2 Հովհաննիսյան Մանե (Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ծնող, քարտուղար)
3 Գրիգորյան Մարինե (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի մանկավարժ)
4 Մովսիսյան Վարդիշաղ (Շուռնուխի միջնակարգ դպրոցի մանկավարժ, մասնակցել է հեռավար)
5 Թոխունց Արման (Բարձրավանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)
6 Աբգարյան Մարիաննա (Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի ծնող)
7 Ալեքսանյան Շուշանիկ (Քարահունջի միջնակարգ դպրոցի ծնող)
8 Ավանեսյան Սյուզաննա (Շուռնուխի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
9 Հովհաննիսյան Արփինե (Բարձրավանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
10 Մկրտչյան Սվետա (Որոտանի միջնակարգ դպրոցի ծնող, մասնակցել է հեռավար)
11 Աբգարյան Մարինե (Մարզպետի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
12 Հովակիմյան Արմինե (Համայնքի ղեկավարի ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
13 Շեգունց Արմինե (ՀՀ ԿԳՄՍՆ ներկայացուցիչ, մասնակցել է հեռավար)
14 Հայրապետյան Դավիթ (Որոտանի միջնակարգ դպրոցի մանկավարժ)
15 Խուրշուդյան Արևիկ (Քարահունջի միջնակարգ դպրոցի մանկավարժ)

Նիստին մասնակցում էին Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի տնօրենի Ժ/Պ Սերգեյ Ավանեսյանը, Գորիսի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Օլյա Ալեքսանյանը, Քարահունջի միջնակարգ դպրոցի տնօրեն Մարիամ Վարդանյանը, Բարձրավանի միջնակարգ դպրոցի տնօրեն Լիլյա Ալումյանը (մասնակցել է հեռավար), Որոտանի միջնակարգ դպրոցի տնօրեն Արա Գրիգորյանը (մասնակցել է հեռավար):

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1 Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
2 2024-2025 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները:
(զեկուցողներ՝ տնօրեններ)
3 «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի նշանակում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
4 «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենների հաշվետվությունների քննարկում:
(զեկուցողներ՝ տնօրեններ)

Լսեցին 1. Օրակարգի հաստատում:
(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)
Զեկուցողը ներկայացրեց օրակարգի կետերը:

Արտահայտվեցին՝

Որոշեցին՝ Հաստատել կառավարման խորհրդի նիստի օրակարգը:

Լսեցին 2. 2024-2025 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների մասին հարցը:

(զեկուցողներ՝ տնօրեններ)

«Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024-2025 ուսումնական տարում դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են հաստատված պլանի համաձայն: Հատուկ ուշադրություն է դարձվել աշակերտների առաջադիմության բարելավմանը, դրա վկայությունն է, որ տարեսկզբի համեմատ գերազանց առաջադիմություն ցուցաբերող աշակերտների թիվը աճել է: Դպրոցում կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված Մայրենի լեզվի, Անկախության օրվա և Հայաստանի պետական խորհրդանիշների օրերին:

Աշակերտները ակտիվ մասնակցել են համայնքային միջոցառումներին: Նշվեցին նաև առկա խնդիրներ՝ հատկապես տեխնիկական միջոցների թարմացման անհրաժեշտությունը:

«Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Զեկուցողը տեղեկացրեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքները ընթացել են ըստ հաստատված պլանի: Դպրոցի աշակերտները հաջողությամբ մասնակցել են մարզային և հանրապետական օլիմպիադաներին, ինչը վկայում է ուսումնառության որակի բարձրացման մասին: 2024-2025 ուսումնական տարին ևս աչքի է ընկել բազմաբնույթ ձեռքբերումներով՝

- Առարկայական օլիմպիադաներ
- Հանրապետական և տարածաշրջանային մրցույթներ
- Մարզական միջոցառումներ:

Դպրոցի աշակերտներն իրենց ակտիվությամբ, ջանասիրությամբ ու նպատակասլացությամբ պարգևատրվել են պատվոգրերով, մեդալներով ու գովասանագրերով:

Այս ամենը հնարավոր է դարձել նաև շնորհիվ մեր ուսուցիչների նվիրված և հետևողական աշխատանքի: Ամեն մի հաջողություն՝ փոքր թե մեծ, դառնում է մեր բոլորի հպարտությունը:

Կազմակերպվել են թեմատիկ բաց դասեր, ցուցահանդեսներ, միջոցառումներ:

«Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Զեկուցողը ներկայացրեց, որ 2024-2025 ուսումնական տարում դպրոցում իրականացվել են մի շարք ուսումնադաստիարակչական ծրագրեր՝ ուղղված ուսումնական առաջադիմության և աշակերտների ներգրավվածության բարձրացմանը: Աշակերտները մասնակցել են մաքրման և ծառատնկման աշխատանքներին:

Միևնույն ժամանակ, դպրոցում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տեխնիկական հագեցվածության բարելավմանը:

«Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Զեկուցողը տեղեկացրեց, որ դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացվել են պայմանավորված սահմանամերձ համայնքի առանձնահատկություններով: Դպրոցում այս տարի շեշտը դրվել է հայրենասիրական դաստիարակության վրա: Կազմակերպվել են հանդիպումներ սահմանապահ զինվորների հետ:

Աշակերտները մասնակցել են համայնքային սպորտային մրցումներին և գրական-երաժշտական միջոցառումների: Տարվա ընթացքում աշակերտների թիվը կայուն է պահպանվել:

«Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Զեկուցողը ներկայացրեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքները ընթացել են պլանային կարգով: Դպրոցում իրականացվել են «Առողջ ապրելակերպ» և «Մասնագիտական կողմնորոշում» պարտադիր խմբակները: Նշվեց, որ աշակերտների մասնակցությունը դպրոցից դուրս կազմակերպվող միջոցառումներին ակտիվ է եղել:

«Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Զեկուցողը տեղեկացրեց, որ ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են հետևողականորեն: Դպրոցում իրականացվել են միջոցառումներ՝ նվիրված Հայոց բանակի օրվան, Մեծ եղեռնի հիշատակին:

Նշվեց, որ նախորդ տարվա համեմատ աշակերտների առաջադիմությունը բարելավվել է: Առկա է նաև նոր ուսումնական գույքի կարիք, որի հարցով ներկայացվել է հայտ:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները շնորհակալություն հայտնեցին բոլոր զեկուցողներին ներկայացված ամփոփ և բովանդակալից տեղեկատվության համար:

Ընդգծվեց, որ ներկայացված հաշվետվություններից ակնհայտ է, որ բոլոր դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացվել են հետևողականորեն և ըստ հաստատված պլանների:

Նշվեց, որ առանձնապես ուրախալի է տեսնել, որ բոլոր դպրոցներում նկատվում է առաջադիմության աճ, իսկ աշակերտները ակտիվ մասնակցություն են ցուցաբերել թե՛ համայնքային, թե՛ մարզային և հանրապետական միջոցառումներին: Դպրոցների ձեռքբերումները՝ օլիմպիադաներում, մրցույթներում և մարզական մրցաշարերում, խոսում են ոչ միայն աշակերտների նվիրվածության, այլև ուսուցիչների հետևողական աշխատանքի մասին:

Միաժամանակ կարևորվեց, որ ներկայացված խնդիրները, հատկապես տեխնիկական միջոցների և ուսումնական գույքի թարմացման անհրաժեշտությունը, գտնվում են տեսադաշտում և պահանջում համակարգված լուծումներ:

Կարծիք արտահայտողները նաև կարևորեցին, որ

- շարունակաբար խթանվեն հայրենասիրական, բնապահպանական և առողջ ապրելակերպի ուղղությամբ իրականացվող ծրագրերը,
- տեխնիկական և նյութատեխնիկական բազայի բարելավման նպատակով ձեռնարկվեն համապատասխան քայլեր,
- դպրոցների միջև կազմակերպվեն փոխայցելություններ և փորձի փոխանակման ծրագրեր՝ լավագույն փորձն ամբողջ համայնքում տարածելու համար:

Ընդգծվեց, որ այսպիսի հետևողական և միասնական աշխատանքով հնարավոր կլինի ոչ միայն պահպանել, այլ նաև զարգացնել մեր կրթական հաստատությունների ձեռքբերումները:

Որոշեցին՝ Հավանություն արժանացնել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ներկայացրած 2024-2025 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին ներկայացված հաշվետվությունները:

Լսեցին 3. «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի նշանակման մասին:

(զեկուցող՝ Ա. Հայրապետյան)

Զեկուցողը տեղեկացրեց, որ Սյունիքի մարզպետի 2025 թվականի մայիսի 30-ի որոշմամբ Մարիամ Վարդանյանը նշանակվել է «Քարահունջի միջնակարգ

դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն: Նա ընդգծեց, որ մինչ այդ Մարիամ Վարդանյանը ներկայացրել է դպրոցի զարգացման ծրագիրը, որը ենթարկվել է համապատասխան փորձաքննության, արժանացել դրական գնահատականի և հաստատվել սահմանված կարգով: Ծրագրի հաստատումից հետո Վարդանյանը մասնակցել է նաև հարցազրույցին և հաջողությամբ հաղթահարել այն՝ ստանալով հաստատության ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու իրավասություն:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները շնորհավորեցին Մարիամ Վարդանյանին տնօրենի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ՝ մաղթելով արդյունավետ և բեղնավոր աշխատանք, ներդաշնակ ղեկավարում և հաջողություններ դպրոցի զարգացման գործում:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում Մարիամ Վարդանյանի նշանակման մասին զեկուցումը:

Լսեցին 4. «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենների հաշվետվությունների քննարկման մասին հարցը:

(զեկուցողներ՝ տնօրեններ)

«Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Օլյա Ալեքսանյանը, «Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանը, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարիամ Վարդանյանը, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմենակ Լալաբեկյանը, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լիլյա Ալումյանը և «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Գրիգորյանը հանգամանալից ներկայացրեցին իրենց ղեկավարած հաստատությունների 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային հաշվետվությունները:

Նրանք անդրադարձան ուսումնական գործընթացի կազմակերպման որակին, ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմնական ուղղություններին, առարկայական առաջադիմության մակարդակին, աշակերտների մասնակցությամբ կազմակերպված միջոցառումներին, ինչպես նաև կառավարման արդյունավետության, աշակերտների ներկա-բացակայության և ուսուցիչների աշխատանքային ծանրաբեռնվածության վերլուծությանը:

Զեկուցողները ներկայացրին նաև դպրոցների զարգացման հիմնական առաջնահերթությունները, արձանագրված հաջողություններն ու առկա խնդիրները, բարձրացրին համապատասխան հարցադրումներ՝ ուղղված կրթական գործընթացի կատարելագործմանը: Շեշտադրվեց նաև համագործակցության անհրաժեշտությունը տեղական կառավարման մարմինների, համայնքի և կրթական այլ կառույցների հետ՝ նպատակ ունենալով նպաստել կրթության հասանելիության, ներգրավվածության և որակի շարունակական բարձրացմանը:

Արտահայտվեցին՝ Կառավարման խորհրդի անդամները

Արտահայտվողները բարձր գնահատեցին ներկայացված հաշվետվությունները՝ կարևորելով դպրոցներում իրականացվող հետևողական և նպատակային աշխատանքը: Նրանց կարծիքով՝ ներկայացված տվյալներն ու վերլուծությունները վկայում են կառավարման արդյունավետության, ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման և կրթական միջավայրի բարելավման ուղղությամբ կատարված քայլերի մասին:

Միաժամանակ նշվեց, որ անհրաժեշտ է շարունակել կենտրոնանալ սովորողների առաջադիմության և կրթության հասանելիության բարձրացման վրա, խթանել ուսուցիչների մասնագիտական աճը և ընդլայնել դպրոց-համայնք համագործակցության շրջանակները՝ դպրոցների կայուն զարգացման ապահովման նպատակով։

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն և հավանության արժանացնել «Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Օլյա Ալեքսանյանի, «Գորիսի Յուրի Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Սերգեյ Ավանեսյանի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարիամ Վարդանյանի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմենակ Լալաբեկյանի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լիլյա Ալումյանի և «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Գրիգորյանի 2024-2025 ուսումնական տարվա աշխատանքային հաշվետվությունները։

Խորհրդի նախագահ՝ _____ Ալեքսանդր Հայրապետյան

Քարտուղար՝ _____ Մանե Հովհաննիսյան

Անդամներ՝ _____ Մարինե Գրիգորյան

_____ Վարդիշաղ Մովսիսյան

_____ Արման Թոխունց

_____ Մարիաննա Աբգարյան

_____ Շուշանիկ Ալեքսանյան

_____ Սյուզաննա Ավանեսյան

_____ Արփինե Հովհաննիսյան

_____ Սվետա Մկրտչյան

_____ Մարինե Աբգարյան

_____ Արմինե Հովակիմյան

_____ Արմինե Շեգունց

_____ Դավիթ Հայրապետյան

_____ Արևիկ Խուրշուդյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Գորիսի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գորիսի Յու. Բախշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Քարահունջի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Շուռնուխի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Բարձրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Որոտանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի միասնական Կառավարման խորհրդի արձանագրությունների ամփոփման

2024-2025 ուսումնական տարվա ընթացքում *Կառավարման խորհուրդը* գումարել է *5 հերթական նիստ*, որոնց համար կազմվել է *5 արձանագրություն:*

Կառավարման խորհուրդը նիստերի տվյալները՝ ստորև.

№	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ	ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ	ՔՆՆԱՐԿՎԱԾ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1	1	23.09.2024	10
2	2	30.12.2024	3
3	3	07.01.2025	3
4	4	07.04.2025	4
5	5	30.06.2025	4

Կառավարման խորհուրդի սույն արձանագրությունների մատյանը կազմված է *21* էջից:

Խորհրդի նախագահ՝ _____ Ա. Հայրապետյան

Քարտուղար՝ _____ Մ. Հովհաննիսյան

«30» հունիսի 2025թ.